# ՀԱՅ ԿԵԱՆՔ ԵՒ ԵԿԵՂԵՑԻ

## Տ. ՍՈՒՔԻԱՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ԿՏԱԿԸ

*Յանուն Ամենասուրբ Երրորդութեան Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, Ամէն։*

*Ես ի ներքոյ սորին ստորագրեալ միաբան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի՝ Սուքիաս արքեպիսկոպոս Պարզեանց ծնեալ ի 10 դեկտեմբերի 1837 ամի յԱստապատ գեղջ գաւառին Հնոյ Նախիջևանի ունելով առաջի աչաց զանհրաժեշտ վախճան ըստ հասարակական օրինի որդւոց մարդկան և զբան Սրբազան Առաքելոյն Պօղոսի՝ «կտակ յետ մահուան հաստատուն է», ի կատարեալ առողջութեան մարմնոյ, յանտրտում ուրախութեան հոգւոյ, ի հասուն դատողութեան մտաց, յանմոռաց յիշողութեան մարդկային պարտուցս, անբռնադատ յօժարութեամբ և կամակար ցանկութեամբ յայտնեմ զվերջին կամս իմ վերաբերմամբ շարժական կայքիս և դրամոց՝ զորս յընթացս գրեթէ յիսնամեայ ռոճկաւոր պաշտօնավարութեանս հոգածու խնայողութեամբ և տնտեսավար ճշտութեամբ ի ձեռս բերեալ եմ։*

*Լինելով ժառանգաւոր շնորհած զաւակ մօր լուսոյ Կաթուղիկէ Սրբոյ Էջմիածնի անդստին ի 1849 ամէ հետէ և այսր, վայելեալ եմ աննախանձաբար խնամօք նորին զբարօրութիւն և յաստիճանաց յաստիճանս սրբազան հոգևոր կոչման ամբարձեալ, և ի պաշտամանց ի պաշտօնակատարութիւնս անցեալ, թեմակոխեալ։ Ուստի և ըստ կանոնաց ազգային Հայրապետաց սրբոյ եկեղեցւոյս Հայաստանեայց, ըստ պահանջման ուխտի, և վանական հրահանգի որպէս անկարօտ լիութեամբ ժառանգեցի ցայսօր զազգային հայրապետական գերամբարձ հաստատութիւնն, նոյնպէս պարաւանդեմ ի խղճէ մտացս դէտ և ժառան-*

զորդս կանգնել իմոյ տնտեսեալ ընչից և զումարաց զնոյն համազգական սրբավայր և զմիաբան եղբարս ի նմին։ Վասն որոյ ի յետագայս մի առ մի յայտ առնեմ զկարևորս՝ կցորդելով նոցին զվերջին կամս և զորոշմունս իմ։

Նախ՝ զտանին ի սենեկիս երեքին ժամացոյցք, յորոց մինն մեծ սեղանոյ և երկուքն փոքրիկ ծոցագրպանի, վերջինին համակ ոսկիք հանդերձ իւրեանց մեծ և փոքր նոյնպիսի շղթայիւք և մի ոսկի ադամանդազարդ ժերոն մեդալիոն, զորս թողում ի ժառանգութիւն մեծ գերապատիւ Տ. Ներսէս ս. արքեպիսկոպոսի Խուդավերդեան, զմիջինն դեր. Տ. Յովհաննէս արքեպիսկոպոսի Շիրակունի, իսկ զփոքրն հանդերձ մեծ շղթայիւ և ժերոնիւ բարձր. Տ. Յուսիկ վարդապետի Զոհրաբեան ի յիշատակ իմ առ նոսա հոգևոր սիրոյ և ջերմեռանդութեան։

Երկրորդ՝ մի եպիսկոպոսական պնակէ հասարակ և մի կարմիր-կանաչ-սպիտակ հասարակ քարամբք զարդարեալ պարանոցական խաչ, զպնակէն թողում ի վայելս գերապատիւ Տ. Ղևոնդ ս. Եպիսկոպոսի Յովակիմեան, իսկ զխաչն բարձրապատիւ Տ. Արտակ վարդապետի Սմբատեան։

Երրորդ՝ մի մարգարտաեռ՝ չորիւք ամիթոս և ադամանդ քարամբք զարդարեալ համակ ոսկի խաչ պարանոցական ձօնեալ ի վայելս նուիրակին Հայոց Ռուսաստանի սրբազան Յովսէփ արքեպիսկոպոսի Երկայնաբազուկ Արզուիթեանց, ընծայեալ ինձ ի Տ. Մակար Վեհափառ Հայրապետի Ամենայն Հայոց, և մի մատանի երկնագոյն եաղուիթ ակամբ հանդերձ վեշտասան ադամանդովք ի շրջանակս, զխաչն թողում ի զարդ թանգարանի Մայր Աթոռոյս ի յիշատակ անուանս, իսկ զմատանին ի վայելս գերապատիւ Տ. Կարապետ եպիսկոպոսի Տէր Մկրտչեանց։

Չորրորդ՝ մի տակառաձև արծաթ ըմպանակ ջրոյ հանդերձ նոյնպիսի փոքրիկ ափսէիւն՝ յորս նկարք Եղիազարու ծառային Աբրահամու Ռեբեկայիւն հանդերձ և Մայր Աթոռ վանուցն սրբոյ Էջմիածնի՝ զորս նուիրեմ ի վայելս բարձրապատիւ Տ. Գարեգին վարդապետի Յովսէփեան։

Հինգերորդ՝ երկոտասանեակ մի արծաթի դրկալք կե-

բակրոյ սկզբնատառիւք անուանս Ս. Ե Պ. հանդերձ ամենայն գտեալ ֆրաժի դանակ-չանկալօք, մատուցարանաւ, սփոռոցօք սեղանոյ և անձեռացկօք, զորս ընծայեմ բարձրապատիւ Տ. Համազասպ վարդապետի Համազասպեանս։

Վեցերորդ՝ մի ձեռք պահարանաւոր արծաթ պատառահատ-պատառաքաղ-դրգալ կերակրոց, դրգալ թէյի, ըմպանակ գինւոյ և աղաման, նոյնպէս սկզբնատառիւք անուանս Ս. Ե. Պ., զորս թողում ի պարգև բարձրապատիւ Բենիկ վարդապետի Տէր Դանիէլեանց։

Եօթներորդ՝ մի արծաթի ջրըմպանակ թաս ի շրջանակն յիշատակագիր «ի վայելս Սուքիաս եպիսկոպոսի», մի բաժակակալ թէյի արծաթեայ և մի նոյնպիսի մանատուփ, զորս ձօնեմ բարձրապատիւ Տ. Գրիգորիս վարդապետի Տէր Յակոբեան։

Ութներորդ՝ մի արծաթի շաքարաման հանդերձ նոյնպիսի ունելեօք, արծաթի կաթնաման և եօթ հատ արծաթի դրկալք թէյի ընդ նոյնպիսի քամչաւն, զորս պարգևեմ ի գործադրութիւն բարձր. Տ. Անտոն վարդապետի Վարդազարեան։

Իններորդ՝ դրեանք եկեղեցական-կրօնական բովանդակութեամբ, քարոզգիրք և այլք զորս ընծայաբերեմ բարձրապատիւ Տ. Բարդէն վարդապետի Աղաւելեանց։

Տասներորդ՝ երկու մեծ և փոքր մուշտակք, քանի մի փիլոնք, ինն վերարկուք և քանի մի պարեգօտք-կապայ, յորոց զմի նոր սեաւ ծաղկեայ կերպաս վերարկուն թողում ի վայելս բարձրապատիւ Տ. Մուշէ վարդապետի Դանագեօզեանց, զթաւշեայ վերարկուն հանդերձ ծաղկեայ կերպաս ծիրանի փիլոնաւ ի գործադրութիւն բարձր. Տ. Զաւէն վարդապետի, զմեծ մուշտակն ի պարգև բարձր. Տ. Սահակ վարդապետի Ամատունի, զփոքրիկ մուշտակն ի կերաուութիւն բարձր. Տ. Գէորգ վարդապետի Ռշտունի, զչուխամահուտ վերարկուն և զսեաւ ծաղկեայ փիլոնն ի պէտս բարձր. Տ. Եսայի վարդապետի Յովսէփեան, խոստովանահօր միաբանութեանս, զատլաս վերարկուն ի վայելուն բարձր. Տ. Եղիշէ վարդապետի Ահարոնեանց, զմիւս կեր-

պաս վերարկուն ի պէտս բարձր. Տ. Սիօն վարդապետի Տէր Մանուէլեանց, զերիս վանաշալ գոյնզգոյն վերարկուս ի պարգև բարձր. Տ. Խաչիկ վարդապետի Դատեան, Տ. Ա-բիստակէս վարդապետի Զուլոյեան և Տ. Խորէն վարդապետի Լազարեանց։ Յետ այսոցիկ թողում ի բարեհաճ կամս տեարց անդամոց Սրբազան Սինոդի և Վանական Կառավարութեան բաշխել զայլ ազանելիս ում և յօժարեսցին ի միաբան եղբարց կամ քահանայից վաստակաւորաց ի պահու կատարման կարգի յուղարկաւորութեանս և թաղմանս։

Մետասաներորդ՝ կահ-կարասիք, որք են երկու մեծադիր և երկու փոքրադիր գորգք, երկու ասղնեգործ գորգք սրմայ, երկու կերպաս վերմակք, երկու ներքնակք, երկու բրդեայ գործարանական վերմակք, եօթն մեծ և փոքր բարձք, ծածկոց սեղանոյ, երկու ամարան վերմակք, մի մահճակալ, երկու բազմոց, գրասեղանք, պահարանք, աթոռք, պղնձեղէնք, սահանք կերակրոց, պնակք սրճոյ և թէյի հանդերձ ամենայն գտելովք ի կացարանիս, ի խոհանոցի և ի փայտարան, զի ձեռս բերեալս իմով սեպհական դրամովք թողում ի տիրապետութիւն Մայր Աթոռոյս այսու պայմանաւ, զի կացցեն մնասցեն նոքին անշարժք յիւրեանց տեղիս ի վայելս միաբանից մայրավանիցս՝ որում հաճեսցի Սրբազնագոյն Հայրապետն կամ Տ. Տեղակալ տալ ի բնակութիւն զանենակս։

Եւ երկոտասաներորդ՝ զտանեն եօթանասուն և հինգ հազար (75000) ռուբլեաց արծաթոյ զանազան կարգի դրամատանց դրամատոմսակք, զորս թողում ի ժառանգութիւն Մայր Աթոռոյ սրբոյ Էջմիածնի յետագայ պայմանօք։ Նախ՝ հոգածութեամբ սրբազան Սինոդի, որպէս կտակակատար գործողի յետ վախճանիս դիցեն նոքին յարքունի դրամատուն անձեռնմխելի, աստանոր կացցեն, մնասցեն յաճուն տոկոսեաք ցկրկնապատկութիւն գումարացն՝ այսինքն ցհարիւր յիսուն հազար ռուբլի արծաթոյ։ Երկրորդ՝ յետ լրման յիշեալ գումարաց զմի հարիւր հազար ռուբլիս արծաթոյ, որպէս անշարժ դրամագլուխ թողուլ ի պետական դրամատան, իսկ ի հաշիւ տարեկան տոկոսեաց նոցին պահպա-

նել ի հոգևոր Ճեմարանի Մայր Աթոռոյ դժառանգաւորս յորդեգիր անուանս՝ հարկաւորելով առ անձն իւր ոք զծախս ի տարին երկերիւր բուբլիս, որ լինի թոշակ տասն և ինն որդեգրաց ըստ չորից տոկոսեաց և զերկերիւր բուբլիս հաշուել ի հասս արքունի։ Այս բաշխումն դրամոց և պահպանութիւն որդեգրաց կացցէ մնասցէ անփոփոխ ցորքան ժամանակս գոյութիւն ունիցի հոգևոր Ճեմարանն, կամ փոխանակ նմին այլ իմն միջնակարգ ժառանգաւորաց ուսումնարան ի շրջապարսպի Մայր Աթոռոյս։ Աւանդեմ, զի ի տասն և ինն սանաց եօթանեքին ընկալցին ի հայրենի Հին-Նախիջևան գաւառէ, երեքն յատկապէս ի ծննդավայր յԱստապատ գեղջէ և չորսն ի քաղաքէն և յայլոց աւանաց և ի շինոց, իսկ մնացորդ տասն և երկուք ընդունեցին յընդհանուր Հայոց Ռուսաստանի, Պարսկաստանի, Տաճկաստանի և այլոց տեղեաց։ Ապա թէ ըստ տարաբաղդ անակնկալ հանգամանաց, ի յետին ժամանակս չունիցի զգոյութիւն որ և է վարժարան ի ս. Էջմիածին, հոգևոր բարձրագոյն իշխանութիւնն՝ այնէ Սրբազան Սինօդն ընդ նախագահութեամբ Վեհափառ Հայրապետի ամենայն Հայոց լիակատար անօրէն է ի բաշխել զտարեկան տոկոսիս մի հարիւր հազար բուբլեաց արծաթոյ ի վերայ հոգևոր թեմական դպրոցաց վիճակացն Հայոց Ռուսաստանի, Պարսկաստանի, Տաճկաստանի և այլոց ըստ իւրումն բարեհաճ նկատման, առի պահպանել ի նոսին զորդեգիրս յանուն իմ, համաձայն տարեկան յատկացեալ ի վերայ թոշակացն։ Վարչութիւն հոգևոր Ճեմարանի Մայր Աթոռոյս կամ փոխանակ նմին դպրոցաց՝ պարտի յամի ամի տալ Սրբազնագոյն Հայրապետի ազգիս զմանրամասն հաշիւ և համար անուանց և թուոց ամենայն որդեգրաց և յառաջադիմութեանց նոցին յուսմանս այլովքն հանդերձ, ապա ի հրատարակել յԱրարատ ամսագրի ի գիտութիւն մերազնէից։

Եւ երրորդ՝ մնացորդ յիսուն հազար բուբլիս արծաթոյ նոյնպէս կացցէ մնասցէ անձեռնամխելի յարքունի դրամատան և տարեկան երկու հազար բուբլի տոկոսիք նորին յետ բարձման մի հարիւր բուբլի արքունի հասու-

թից, յատկացին ի ծախս տպագրութեան թէ շարունակելի հատորոց «Շար պատմագրութեան Հայոց», որոյ համեմատութիւնք ընթերցուածոց ըստ մատց հեղինակաց, յօգուտ որպիսի ձեռնարկութեան ի 1903 Թուականի արդէն ընծայաբերեալ եմ գվեց հազար բուբլիս արծաթոյ և թէ յիշատակարանաց ձեռագիր մատենից գրանոցի Մայր Աթոռոյս, մանաւանդ անտիպ հեղինակութեանց՝ վերաբերելոց եկեղեցական, կրօնական ուսմանց և ազգային մատենագրութեանց։ Ընտրութիւն և հաւանութիւն հրատարակութեան նոցին վերապահի խառն յանձնաժողով՝ կազմեալ յուսուցչաց Աստուածաբանութեան, գրականութեան Հայոց և այլոց ազգաց յերիս լսարանս հոգևոր ճեմարանի, ի վերատեսչէ նորին և ի ձեռնհաս անդամոց միաբանութեան մայրավանիցս ըստ ընտրութեան Սրբազան Սինոդի և վաւերացման Սրբազնագոյն Հայրապետի, թիւ անդամոց որոյ չունի լինել պակաս քան զհինգ և աւելի քան զեօթն անձինս։ Ցամենայնի և միշտ պարտէ տալ առաւելութիւն ի հրատարակութեան վասնակաց կուսակրօն և ամուսնաւոր եկեղեցականաց և ուսուցչաց ազգային վարժարանաց։ Համօրէն հրատարակութիւնք ի հաշիւ տոկոսեաց կտակաւանդեալ գումարաց՝ յետ վարձատրութեան հեղինակաց և աշխատասիրող բանասիրաց ըստ որոշման յանձնաժողովոյ պարտին վաճառիլ յօգուտ մատենադարանի և արդեանց համարաղրել ի տարեկան տոկոսիս յիսուն հազար բուբլի գլխագրամոց և ծախիլ ի պէտս հրատարակութեանց՝ որովք ամ ըստ ամէ ընդարձակեալ բարգաւաճէ գործառնութիւն տպագրութեան օգտաբեր մատենից։ Սոյն յանձնաժողով պարտի նախապէս կազմել զմանրամասն հրահանգս կանոնաց ի մասին ընտրութեանց տպագրելի գրոց, բովանդակութեան նոցին և չափու վարձատրութեան հեղինակաց, բանասէր աշխատասիրողաց, որպէս մշտատև անխոտոր կապարան և յետ հրատարակութեան առանձին տպագիր տետրակօք կամ հրատարակութեամբ «յԱրարատ» ամսագրի, տալ զհաշիւ որպէս տպագրելի գրոց, նոյնպէս և զդրամական մտից և ծախուց ի տեղեկութիւն ազգի և ի գիտու-

թիւն հետախնդիր անձնաւորութեանց։

Բաց ի գումարաց յիշատակեալ յերկոտասաներորդ յօդուածի հրիտակիս թողում և առձեռն պատրաստի զմի հազար չորս հարիւր ռուբլիս արծաթոյ (1400), յորոց զմի հազար ռուբլիս ի ծախս թաղմանս ըստ յետագայ բաշխման։ Ա.) աջահամբոյր Սրբազնագոյն Քահանայապետի 100 ռուբ., Բ) ժամոց Սրբազան պատարագչի և օծողի զդիս 50 ռուբ., Գ) պաշտամադրամ երկոտասան եպիսկոպոսաց ըստ տասն և հնգական արծաթոյ 180 ռ., Դ) պաշտամադրամ երեսուն վարդապետաց և քահանայից ըստ 10-ական արծաթոյ 300 ռ., Ե) վեց սարկաւագաց ըստ հնգական արծաթոյ 30 ռ., Զ) երկերիւր սանուց ճեմարանի 200 ռ., Է) 5 ծառայից, դռնապանաց և սպասաւորաց 25 ռուբ., Ը) դագաղի և դիազարդի 30 ռուբ., Թ) հատման գերեզմանի և տապանաքարի 50 ռուբ., Ժ) աղքատաց և հոգեհաց 35 ռուբ.։ Զպակասորդս ի միոյ հատուածոյ ծախուցն լցուսցէ յաւելուած միւսոյն։ Իսկ զչորս հարիւր ռուբլիս արծաթոյ ի միանուագ պարգև սպասաւորին իմոյ Բարսղի Ղազարեան յաղագս հայթայթելոյ ինքեան և ընտանեացն զապրուստ ցգիւտ նորոյ պաշտաման և պարապմանց ի պահպանութիւն կենաց։

Ի կնիք վերագրելոց ամենից աղաչեմ զկտակակատարս իմ զպատկառելի Ատենակալս Սրբազան Սինոդի և զսրբազնասուրբ Հայրապետ Հայաստանեայցս ս. Եկեղեցւոյ, ամբասիր զիս առնել յաղագս յետաձգելոյ զշահեցողութիւն կրթական հաստատութեան Հոգևոր Ճեմարանի և բանասիրաց ի դրամագլխոյս ցկրկնապատկութիւն նորին, զի դիտաւորութիւնս յառաւել օգտախնդրութեանց սիրեցելոյ ազգիս յառաջացաւ։ Ասերկրայ հաւատով և հաստատուն յուսով ննջեցից ի Տէր Յիսուս Քրիստոս՝ զանձնս յանցապարտ և զհամօրէն ճշմարիտ հաւատացեալս յանձն առնելով ողորմութեան Ամենակալին, որ ունի կարողացուցանել և եռանդնաւորել զկտակատարս միաբան հաւանութեամբ և միամիտ սրբութեամբ գործադիր հանդիսանալ վերջին բաղձանացս՝ արտայայտեալ ի կտակագրիս, և վարձս բա-

բեաց յառատաձիր պարգևաց ամենասուրբ Հոգւոյն Աստուծոյ ընդունել յաստիս և ի հանդերձեալ անվախճան յաւիտենին, Ամէն։

Ծանօթութիւն. Եթէ միուն յանուանեալ միաբանակից եղբարց Մայր Աթոռոյս կանխեսցէ մահ յառաջ քան զվախճանս յանուն նորին կոչակաւանդեալ իրն պարտի մնալ ի սեպհականութիւն Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի, որպէս ժառանգաւորի մենաւոր վանականի համաձայն օրինական ցուցմանց և յետ կատարման քառասնօրեայ կարգի թաղմանս Սրբազան Սինոդն և Վանական Կառավարութիւն հրամանաւ Սրբազնագոյն Կաթուղիկոսի կամ Տէր Տեղակալի պարտաւոր են տալ հրատարակել զայս հրիտակ ամբողջութեամբ յէջս «Արարատ» ամսագրոյ ի գիտութիւն ազգայնոց։

Զկտակագիրս յինէն շարադրեալ և արտագրեալ իմովս իսկական ստորագրութեամբ վաւերացուցանեմ։ Միաբան Մայր Աթոռոյ Սրբոյ Էջմիածնի՝ Սուքիաս Արքեպիսկոպոս Պարզեանց։

23 յունուարի 1912 ամի
ի Սուրբ Էջմիածին։

Կտակը կազմելիս ներկայ են եղել և ստորագրել են.

Յովհաննէս Արքեպիսկոպոս Շիրակունի
Ղեւոնդ եպիսկոպոս Յովակիմեան
Գէորգ վարդապետ Ռշտունի
Յուսիկ վարդապետ Զոհրաբեան
Մուշէ վարդապետ

Մ. Աթոռի գանձարանում հանգուցեալ Տ. Սուքիաս արքեպիսկոպոսի դրամական ծրարը բաց անելով՝ երևացել է, որ հանգուցեալը թողել է հետևեալ գումարները.

1) Զորս հատ 4% բենատ իւրաքանչիւրը 5000 ռ.
արժողութեամբ . . . . 20,000 ռ.

2) Մի հատ 4% բենատ 500 ռ. արժողութ. 500 ռ.

3) Երեք հատ պետական հողային բանկի Закл. листъ իւրաքանչիւրը 1000 ռ. արժողութ. . 3,000 ռ.

4) Մի հատ նոյնը 500 ռ. արժողութ. . 500 ռ.

5) Երկու հատ Տփխիսի ազնուական հող. բանկի իւրաքանչիւրը 1000 ռ. արժողութ. . 2000 ռ.

6) Մի Վոլժսկո-Կամսկի բանկի տոմս . 17,700 ռ.

7) Մի մուրհակ Համբարձում Սողոմոնեանի ստորագրութեամբ . . . . 8,000 ռ.

8) Մի հատ Համբարձում Սողոմոնեանի ստորագրութեամբ ստացագիր, որով վերցրել է Տ. Սուքիաս արքեպիսկոպոսից ի պահպանութիւն 5 հատ ազնուական. բանկի տոմս իւրաքանչիւրը 1000 ռ. արժողութեամբ . 5000 ռ.

9) Նոյն Համբարձում Սողոմոնեանի ստորագրութեամբ ի պահպանութիւն վերցրած 4% բենատ. 20,000 ռ.

Ընդամենայն . . 76,700 ռ.

Այս գումարից 33 հազարը գտնւում է վաճառական Համբարձում Սողոմոնեանի մօտ, իսկ մնացած 43,700 ռ. Մայր Աթոռի գանձարանում, որից 1,700 ռուբլին ըստ կտակի պէտք է հոգացուի թաղման վերաբերեալ ծախքերը, իսկ մնացած 42,000 ռ. գումարը և Համբարձում Սողոմոնեանից 33 հազարն իւր %%-ներով ստանալով պէտք է շահեցնուի այնքան ժամանակ, որ ըստ կտակի դառնայ 150,000 ռ. որից յետոյ պէտք է կատարուի հանգուցեալի կամքը։